

Լիլիթ Ծատուրյան (ԵՊՀ մագիստրոս,
Երևանի Ս. Խանգադյանի անվան հ. 184 ավագ դպրոց)

ԽՆԴՐԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ժամանակակից գրական արևելահայերենում կապակցության եղանակներ ասելով հասկանում ենք կապակցվելու համար բառերի դրսևորած քերականական հատկանիշները: Նախադասության մեջ բառերն իրար նկատմամբ կարող են գտնվել երկու տեսակ հարաբերության մեջ՝ համադասական և ստորադասական: Հայ քերականագիտության մեջ լեզվաբանները, հաշվի առնելով մի շարք օրինաչափություններ և հիմք ընդունելով տարբեր հատկանիշներ, առանձնացնում են շարահյուսական ստորադասական կապակցության երեք եղանակ՝ համաձայնություն, խնդրառություն, առդրություն: Թեև հենց այս հարցի վերաբերյալ ընդհանուր և միասնական մոտեցում չկա, քանի որ տարբերակում են նաև կապակցության այլ եղանակներ, նաև հաճախ վիճելի է, թե շարահյուսական տվյալ կառույցը ինչ եղանակով է կապակցվել, սակայն այստեղ կանդրադառնանք միայն խնդրառության առանձնահատկություններին, որոշ հարցերի վերաբերյալ կփորձենք տալ նաև մեր մեկնաբանությունը:

Խնդրառության էությունը հասկանալու համար նախ քննենք տերմինի հարցը: Մ. Աբեղյանը խնդրառություն անվանում է քերականության մեջ կախման հարաբերությունը¹: Ինչ վերաբերում է երևույթի՝ խնդրառություն, հոլովառություն, վարում, կառավարություն անվանումներին, ապա միանգամայն համոզիչ է Հ. Հարությունյանի մոտեցումը այս հարցի վերաբերյալ, այն է՝ կապակցվող բառերից գերադասի պահանջով ստորադասի՝ այս կամ այն հոլովով կամ հոլովով ու կապով դրվելու երևույթը անվանել կառավարում²: Իսկապես, եթե խնդրառություն ասելով նկատի ունենք հոլովական և հոլովակապային արտահայտություն ունեցող լրացումների կապը լրացյալին՝ որոշչային, պարագայական, խնդրային և այլն, ապա ստացվում է որոշակի հակասություն, քանի որ ի տարբերություն նախորդ դարերի հայ քերականների՝ XX դարի լեզվաբանները խնդիրները և պարագաները տարբերակում են: Այս հարցի վերաբերյալ Գ. Ջահուկյանի

¹ Տե՛ս **Աբեղյան Մ.**, *Հայոց լեզվի տեսություն*, «Միտք» հրատ., Եր., 1965, էջ 397:

² Տե՛ս **Հարությունյան Հ.**, *Կառավարումը ժամանակակից հայերենում*, ԵՊՀ հրատ., Եր., 1983, էջ 27-28:

առաջարկությունը նույնպես տեղին է, քանի որ «խնդրատություն» և «հոլովատություն» տերմինները լիարժեք չեն արտահայտում բուն երևույթը. նախ՝ շարահյուսական կապակցության եղանակը շփոթվում է նրա իրականացման միջոցի հետ, և հասկացությունը նեղացվում է (կառավարությունը կարող է լինել ոչ միայն խնդրատություն, այլ նաև պարագատություն), երկրորդ՝ կապակցությունը կարող է արտահայտվել ոչ միայն որպես հոլովատություն, այլ նաև որպես կապատություն³: Այս տեսակետից Գ. Ջահուկյանի առաջարկած *կառավարություն* տերմինը լիարժեք ընդգրկում է հասկացությունը, սակայն որպես լեզվաբանական տերմին հարմար չէ, այդ պատճառով էլ ավելի հաջող է Հ. Հարությունյանի առաջարկած *կառավարում* տերմինը:

Կառավարման մեջ վճռական դեր ունի կառավարող բառի իմաստը: Այս հարցի վերաբերյալ Հ. Հարությունյանը գրում է, որ կան տարբեր խոսքի մասերի պատկանող, հետևաբար քերականական ընդհանուր, խոսքիմասային իմաստով տարբերվող նույնարմատ բառեր, որոնք, պայմանավորված արմատական իմաստի ընդհանրությամբ, առնում են նույն լրացումը, բայց խոսքիմասային իմաստի տարբերության պատճառով նրանք ունեն նաև կառավարման տարբերություններ, առնում են տարբեր ձևավորում ունեցող լրացումներ, օրինակ՝ *աղավաղել էլույթը և էլույթի աղավաղում*: Կառավարման մեջ որոշակի նշանակություն ունեն կառավարող բառի ներխոսքիմասային (օր.՝ ասացական, մտածական բայերը առնում են բացառականով կամ սեռական/տրականով ու *կողմից* կապով արտահայտված խնդիրներ. *խոսել ընկերոջ մասին, պատմել ներկայացումից*), բառական իմաստները, օր.՝ *բաժանել* բայը *առանձնացնել, տարբերել* իմաստներով ուղղականով (տրականով) խնդրի հետ մեկտեղ առնում է նաև բացառականով (*բաժանում է արհեստը արվեստից*), իսկ *բաշխել, մասերի վերածել* իմաստներով բացառականի փոխարեն առնում է տրականով խնդիր (*տեսորը բաժանել երկու մասի*): Բառիմաստի, հետևաբար կառավարման վրա է ազդում նաև բառի կազմությունը: Բառերի առանձին խմբեր, որոնք որևէ ընդհանուր ձևույթ ունեն, դրանով պայմանավորված՝ ունեն նաև կապակցելիության ընդհանրություններ: Օրինակ՝ *արտ*- նախածանցով մի շարք կազմություններ առնում են բացառականով լրացումներ (*արտահանել՝ որտեղի՞ց, արտագաղթել՝ որտեղի՞ց, արտանետել՝ ինչի՞ց* և այլն):

³ Տե՛ս Գ. Ջահուկյան Գ., *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, ՀՄՍՀ ԳՍ հրատ., Եր., 1974, էջ 423:

⁴ Տե՛ս Հարությունյան Հ., *նշվ. աշխ.*, էջ 67-71:

Բացի բառիմաստից՝ կառավարման համակարգում որոշակի դեր են խաղում կառավարող բառի քերականական հատկանիշները: Դրանցից առանձնացնենք հատկապես սեռը: Հ. Հարությունյանը, սեռը համարելով բառաքերականական (շարահյուսական) կարգ, սեռային փոփոխություններն էլ համարում է բառակազմական փոփոխություններ, որոնք փոխում են բայիմաստը, և դրա հետևանքով առաջանում են շարահյուսական կապակցելիության փոփոխություններ⁵:

Կառավարման մեջ որոշակի նշանակություն ունեն պատմական-ավանդական գործոնները: Դա ցույց տալու համար Գ. Ջահուկյանը համեմատում է հայերենի և ռուսերենի օրինակները. «*Գոհ եմ քեզնից*» և «*Доволен тобою*», «*Վախենում եմ քեզնից*» և «*Боясь тебя*», որոնց դեպքում միևնույն խնդիրների հոլովական ձևավորումը տարբեր է: Այս դեպքում «լրացման հոլովական ձևավորումը պայմանավորված է տվյալ լրացյալի հետ տվյալ լրացման՝ պատմականորեն ավանդված գործածությամբ»⁶:

Անդրադառնանք կառավարման տեսակներին, որի վերաբերյալ ըմբռնումները նույնպես տարբեր են: Այսպես, Գ. Ջահուկյանը տարբերակում է խնդրառության թույլ և ուժեղ տեսակներ՝ մինչ այդ նշելով, որ խնդիրների կապը ստորոգյալի հետ ավելի ուժեղ է, քան պարագաներինը: Ուժեղ կառավարման դեպքում լրացյալը պահանջում է որոշակի հոլովով կամ կապով և հոլովով ձևավորված լրացում, իսկ թույլ կառավարման դեպքում լրացման հոլովական ձևավորումը հիմնականում կախված է նրա գործառությունից, շարահյուսական դերից ու պաշտոնից⁷: Ռ. Իշխանյանը, նույնպես տարբերակելով ուժեղ և թույլ խնդրառությունը, ուժեղ խնդրառությունը անվանում է կառավարում՝ ելնելով այն հանգամանքից, որ խնդրառու բայը կարծես կառավարում, ղեկավարում է խնդրին: Ուժեղ խնդրառության արտահայտություն է բայերի՝ սեռի խնդիր առնելը (ներգործական և կրավորական սեռի խնդիրներ): Սակայն նշենք, որ ուժեղ և թույլ խնդրառությունը տարբերակելը հաճախ դժվարություններ է առաջացնում, օր.՝ *Նա ցավից հեկեկում էր* նախադասության մեջ *ցավից*-ը ուժե՞ղ, թե՞ թույլ խնդրառությամբ է կապված *հեկեկալ* բային: *Հեկեկալ* բայը պահանջում է բացառական հոլովով լրացում, թեև ոչ այնքան ուժեղ, որքան, օրինակ, *խուսափել*-ի դեպքում, այդ պատճառով էլ տվյալ դեպքում

⁵ Տե՛ս Հարությունյան Հ., *նշվ. աշխ.*, էջ 79-80:

⁶ Տե՛ս Ջահուկյան Գ., *նշվ. աշխ.*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1974, էջ 426:

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 424:

խնդրառությունը թույլի և ուժեղի միջին դիրքում է⁸: Կառավարման տեսակների մասին խոսվում է նաև «Ժամանակակից հայոց լեզու» աշխատության 3-րդ հատորում, որտեղ ըստ լրացումների քանակի՝ խնդրառությունը բաժանվում է միակի (գերադաս անդամը պահանջում է մեկ խնդիր) և կրկնակի (գերադաս բառը պահանջում է մեկից ավելի խնդիրներ) խմբերի⁹: Կարծում ենք, որ ըստ էության դրանք ոչ թե խնդրառության տեսակներ են, այլ արժույթայնություն, բացի այդ՝ ստացվում է, որ դուրս են մնում եռարժույթ, քառարժույթ և զրո արժույթ ունեցող բայերը:

Անդրադառնանք մի հարցի ևս. կապակցության ինչպիսի՞ եղանակ է գործում ստորոգելիական վերադրի և հանգույցի միջև: Անորոշ դերբայ վերադիր կարող են ունենալ ոչ բոլոր ներգործական սեռի բայերը, այլ միայն նրանք, որոնք արտահայտում են ցանկության, տրամադրվածության, խնդրանքի, համաձայնության, պարտադրանքի, խոստման և նման իմաստներ: Քանի որ այդպիսի իմաստներ արտահայտող բայերի մի մասը ներգործական սեռի է, կարող է ուղիղ խնդիր լրացում ընդունել, իսկ չեզոք սեռի բայերի մի մասն էլ՝ անուղղակի խնդիր: Անորոշից բացի՝ նշված իմաստներով ներգործական և չեզոք սեռի բայերի մի մասը կարող է այլ խոսքի մասով արտահայտված խնդիր ընդունել, ինչպես՝ *առաջարկեց մեկնել – առաջարկեց օգնություն, վախեցավ ասել/ուց – վախեցավ հորից, բայց երդվել, կարողանալ, թույլատրել, աշխատել, ստիպել* և այլ բայերի դիմավոր ձևերը որպես կանոն անորոշ դերբայ լրացում են պահանջում և այլ խոսքի մասով (գերազանցապես գոյական կամ դերանուն) արտահայտված խնդրի հետ կապակցվել չեն կարող: Ըստ այդմ՝ երբ անորոշ դերբայը խնդրառական հարաբերությամբ լրացնում է տարբեր արժեքի դիմավոր բայերի (*ուզում է գնալ, ձգտում է հասնել/ու* և այլն), կարելի է տարբերակել հետևյալ դեպքերը. 1. դիմավոր բայը ներգործական սեռի է և ուժեղ խնդրառությամբ պահանջում է ուղիղ խնդիր: Այդ դեպքում անորոշ դերբայը դրվում է ուղիղ ձևով, իսկ անորոշի դիրքում կարող է լինել հայցական հոլովով գոյական կամ դերանուն: Այն դեպքում, երբ անորոշը ներգործական սեռի դիմավոր բայի հետ գործածվում է հոդով, ունենք ոչ թե բաղադրյալ ստորոգյալ, այլ ուղիղ խնդիր, ինչպես՝ *Միրում է երգելը*: 2. Դիմավոր բայը չեզոք սեռի է և բայիմաստով պայմանավորված պահանջում է տրական կամ բացառական հոլովներով ձևավորված խնդիրներ: Գոյական կամ դերանուն խնդրի դեպքում նշված

⁸ Տե՛ս Իջևանյան Ռ., *Արդի հայերենի շարահյուսություն. պարզ նախադասություն*, ԵՊՀ հրատ., Եր., 1986, էջ 28:

⁹ Տե՛ս Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Բաղիկյան Խ., *Ժամանակակից հայոց լեզու. շարահյուսություն*, հ. 3, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1976, էջ 372:

հոլովները միակ հնարավոր ձևերն են, իսկ անորոշի դեպքում առկա է երկվություն. այն կարող է դրվել և՛ նշված հոլովներով, և՛ ուղիղ ձևով. **հրաժարվում է խոստումներից – հրաժարվում է խոստանալ/ուց.** «Գերադաս դիմավոր բայի խնդրառությամբ թելադրվող տրական կամ բացառական հոլովների փոխարեն ուղիղ ձևով տրված անորոշ դերբայը (**ձգտել է պատկերել, ամաչում է պատասխանել** և այլն) քերականական ավանդույթով հաճախ կոչվում է «բացարձակ աներևույթ» կամ «բացարձակ անորոշ»¹⁰: 3. Դիմավոր բայը գոյական կամ դերանուն խնդիրների հետ չի կապակցվում և ունենում է միայն անորոշ դերբայի ուղիղ ձևով արտահայտված լրացում. **համարձակվում է խոսել, ստիպեց լռել** և այլն: Դիմավոր բայի և անորոշ դերբայի գուգորդմամբ առաջացող շարահյուսական կառույցի վերաբերյալ կարող ենք ընդունել Լ. Թեյլանի տեսակետը, այն է՝ մեկ միասնական բաղադրյալ ստորոգյալ համարել դիմավոր բայի և դրան հետադասված ուղղականաձև անորոշ դերբայի կապակցությունը, միայն դերբայի հետ գուգորդվող բայերի կապակցությունները (**աշխատում է, կարողանում է, դժվարանում է գնալ**), քանի որ անորոշի հոդով կամ թեքված ձևերը հնարավոր չեն, և դրանք ամբողջական միավոր համարելը այլընտրանք չունի, տրական և բացառական հոլովներով, նաև հոդ ունեցող ուղղականաձև անորոշ դերբայների և դիմավոր բայերի կապակցությունները (**սկսում է նվազելը, պատրաստվում է մեկնելու, հրաժարվում է խոսելուց** և այլն) համարել շարահյուսորեն վերլուծելի միավորներ¹¹: Շարահյուսորեն վերլուծելի կառույցների բաղադրիչները պետք է կապակցվեն որևէ եղանակով, որն ըստ Հ. Հարությունյանի կառավարումն է¹²: Կարծում ենք՝ այս տեսակետն ընդունելի է: Ընդ որում՝ այն ուժեղ խնդրառություն է, քանի որ պահանջում է խնդիր լրացում: Իսկ բաղադրյալ ստորոգյալը մեկ ամբողջական միավոր է, որը մոտենում է հարադրություններին, սակայն ոչ թե բառային միավոր է, այլ քերականական, ուստի կարծում ենք՝ կապակցության եղանակ առանձնացնել նպատակահարմար չէ:

Կառավարումն ըստ էության ավելի բնորոշ է բային: Մյուս խոսքի մասերի՝ գոյականի, ածականի դեպքում այն ինչ-որ չափով հիշեցնում է բայի կառավարումը, քանի որ հիմնականում կառավարող են բայահաղորդ գոյականներն ու ածականները, այն բառերը, որոնք բայերի հետ ունեն բառարմատի ընդհանրություն, որից էլ բխում են իմաստային ու

¹⁰ Թեյլան Լ., «Բացարձակ աներևույթի» գնահատման շուրջ, Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն, 2015, № 3 (18), էջ 44:

¹¹ Նույն տեղում, էջ 48:

¹² Տե՛ս Հարությունյան Հ., նշվ. աշխ., էջ 181:

կապակցական ընդհանրությունները: Բայանուն գոյականները մեծ մասամբ ածանցավոր են (*-ակ, -ան, -իչ, -իք, -մունք, -ություն, -ում, -ք* և այլն): Ածանցներ չունեցող բայանուն գոյականներից են՝ *բողոք, վեճ, աճ* և այլն¹³: Բայանուն գոյականները և նույնարմատ բայերը պահանջում են նույն հոլովով կամ հոլովով ու կապով խնդիրներ (*վիրավորվել – վիրավորանք՝ ինչի՞ց, խնդրել – խնդրանք՝ ումի՞ց, հանդիպել – հանդիպում՝ ինչի՞ (ն), բամբասել – բամբասանք՝ ումի՞ց, խոսել – խոսք՝ ինչի՞ մասին, թշնամանալ – թշնամություն՝ ու՞մ հետ (դեմ)* և այլն): Թեև պետք է նշել, որ բայերը և բայանուն գոյականները տարբերվում են նաև արժույթայնությամբ: Բայերն աչքի են ընկնում բազմարժույթայնությամբ, մինչդեռ բայանունները հիմնականում քիչ լրացումներ են առնում:

Ինչ վերաբերում է ածականին, ապա դրա շարահյուսական կիրառություններից մեկը ածականական բառակապակցության գերադասանդամ լինելն է՝ առնելով հոլովական կամ հոլովակապային լրացումներ: Ածականը տվյալ դեպքում սովորաբար դառնում է գոյականի, երբեմն նաև բայի լրացում (*կյանքից դժգոհ մարդ, մարդուն հաճելի խոսք, միջավայրին հարմար պայմաններ, քննությանը պատրաստ ներկայանալ, հանգամանքին ծանոթ լինել*)¹⁴:

Կապերը սովորաբար բայական լրացումն են կապում բային՝ կատարելով հոլովական վերջավորության դեր, մյուս կողմից՝ քերականորեն գերադաս են կապակցվող բառի նկատմամբ և առնում են որոշակի հոլովաձև: Այս հարցի վերաբերյալ կարևոր դիտարկում է անում Հ. Հարությունյանը. «Գոյականի հոլովական ձևավորումը պայմանավորված չէ բայի պահանջով, այլապես պիտի նկատվեր այն օրինաչափությունը, որ բայի հետ պետք է գործածվեր նույն հոլովաձևը, ինչ նրա անմիջական, հոլովական, առանց կապի կառավարման դեպքում: Այնինչ այդպես չէ, թեև կան առանձին համընկնումներ: Օրինակ. *ուտել գդալով, բայց առանց գդալի, գրուցել անելիքներից, բայց անելիքների մասին, ընկերներով գնալ, բայց ընկերների հետ գնալ* և այլն»¹⁵:

Նշենք նաև, որ կապերին բնորոշ չէ բազմարժույթայնությունը: Կառավարման տարբերակները բնորոշ են մի քանի բայերի՝ *հետո, ի վեր, առաջ*, օրինակ՝ *մի ժամ հետո – մի ժամից հետո, դարեր ի վեր – դարերից ի վեր, մի քանի քայլ առաջ – մի քանի քայլից առաջ*¹⁶: Ինչ վերաբերում է ևս մի

¹³ Տե՛ս Հարությունյան Հ., նշվ. աշխ., էջ 233-236:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 257:

¹⁵ Նույն տեղում, էջ 285:

¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 304:

քանի կապերի՝ տարբեր հոլովներով կապի խնդիր առնելուն, ապա այդտեղ գործ ունենք շեղումների և ոչ ճիշտ ձևերի հետ, օրինակ՝ *բացի* կապը առնում է բացառականով լրացում, սակայն պայմանավորված դերանվան հետ հայցականաձև կիրառությամբ (*բացի դա՝ բացի դրանից*-ի փոխարեն)՝ սկսել է սխալ կիրառվել նաև գոյականի հետ (*բացի ասվածը՝ բացի ասվածից*-ի փոխարեն):

Հարկ է նշել, որ ոչ բոլոր լեզվաբաններն են ընդունում կապի՝ կառավարող բառ լինելու հանգամանքը: Այսպես, Ս. Աբրահամյանը, ելնելով այն իրողությունից, որ կապերը սպասարկու բառեր են, նշում է, որ կապի ստորադաս լինելը հակասում է խնդրառության սկզբունքին, ըստ որի՝ խնդրառու բառը գերադաս է խնդրի նկատմամբ: Ըստ լեզվաբանի՝ ոչ թե նյութական իմաստ ունեցող բառն է գործածվում կապի պահանջով, այլ կապն է գործածվում նյութական իմաստ ունեցող բառի և գերադաս բառի հարաբերությունն արտահայտելու համար¹⁷: Կարծում ենք՝ այս հարցի վերաբերյալ ավելի համոզիչ է Հ. Հարությունյանի տեսակետը: Բերելով շաղկապների փոփոխությունից բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունների հարաբերության տեսակի ու բնույթի փոփոխություն առաջանալու օրինակներ՝ նա նշում է, որ լիիմաստ բառ չլինելն էլ պատճառ է, որ կապերը ինքնուրույն չգործածվեն, ոչ միայն պահանջեն նյութական իմաստ ունեցող բառ, այլ նաև առնեն այս կամ այն հոլովը, ուստի կապվող բառի քերականական ձևը պայմանավորվում է կապի պահանջով, և կապակցության մեջ կապն է գերադաս բառը¹⁸:

Ըստ այդմ՝ կառավարման մեջ վճռական դեր ունեն կառավարող բառի իմաստը, կառավարող բառի քերականական, նաև ներխոսքիմասային հատկանիշները: Կառավարման տեսակներն են ուժեղ և թույլ կառավարումները, որոնք առանձնացնում են ըստ սերտության աստիճանի: Ուժեղ խնդրառությունը (կառավարումը) հիմնականում դրսևորվում է բայի և իր խնդիր լրացումների միջև, որոնք կարող են դրվել այս կամ այն հոլովով և հոլովով ու կապով: Կառավարող կարող են լինել նաև բայահաղորդ գոյականները, ածականները, որոնց կառավարումն ինչ-որ չափով հիշեցնում է բայի կառավարումը: Թույլ խնդրառությամբ բային կապվում են այն պարագաները, որոնք արտահայտված են գոյականի հոլովաձևով կամ հոլովով ու կապով:

¹⁷ Տե՛ս **Աբրահամյան Ս.**, *Չթերվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում*, ԳԱ հրատ., Եր., 1965, էջ 343-344:

¹⁸ Տե՛ս **Հարությունյան Հ.**, *նշվ. աշխ.*, էջ 288:

Lilit Tsaturyan. The management features in Armenian language. The meaning of the word, the grammatical and the intransitive features of the word play a decisive role in the management. Types of management are strong and weak management, which are distinguished by the degree of closeness. Strong management is mainly displayed in the verb and its object. Nouns and adjectives can also manage the objects, the management of which is somewhat reminiscent of verb management.

Лилит Цатурян. Особенности управления в армянском языке. Значение слова, грамматические черты слова играют решающую роль в управлении. Типы управления - сильное и слабое управление, которые отличаются степенью близости. Сильное управление в основном выражается между глаголом и его объектом. Их можно поставить в разных падежах или в падежах и союзах. Существительные и прилагательные могут также управлять объектами, управление которыми несколько напоминает управление глаголом.